

ուխտեալ մեր համալսարանական աշակերտներու խումբը, իրենց Մեծաւորներով ու հոն պաշտօնավարող միաբաններով. երկու տարիէ ի վեր իրարմէ բոլորովին բաժնուած մնալէ ետք, պատեւազմի կրակէն ու ռումբերէն ձողողւած, յուղումով կը հանդիպէին իրարու Արքահայրն ու որդիները կարօտադին:

Միաբանութեան կողմէ շնորհակալութեան օր կը յայտարարուի 1945ի Սեպտեմբեր 8ը եւ պատրաստութիւններ կը տեսնուին Ս. Ղազար փոխադրուելու: Տիրապետող անդլեւամերիկեան զինուորական ոյժերու կողմէ տրամադրուած մասնաւոր ինքնաշարժներով բոլորս կը հասնինք վանք. բացառիկ երեւոյթ մըն էր Ս. Ղազարի քարափին չուան նետած հրակայ լաստանաւը, որուն վրայ կանգուն մեր բեռնակառք ինքնաշարժը ցոլք կը նետէր կապոյտ ջուրերուն մէջ: Արցունքով կ'ողջագուրուինք վանքի պահապան քաջարի վարդապետներուն հետ, որոնք հետաքրքրութեամբ քարափ փութացած են այս անակնկալ ու տարօրինակ երեւոյթը նկատելու. ինքնաշարժ մը՝ վանքի քարափին: Կը համբուրենք կարօտով վանքի կարմիր որմերը, Մխիթարի երկղարեան շիրիմը եւ տունը սրբազան:

Ս. Ղազար, Սահակ ու Մեսրոպ դարձեալ իրենց պատուոյ դիրքերն են դրաւած՝ վանքի մայր տաճարին խորանին շուրջ. կը մատուցուի դոհարանական սուրբ պատարագը: Վեց տարի առաջ, պատերազմի հռչակումի տխուր օրը, այնտեղ ծնրադիր, Կոմիտասեան «Տէր ողորմեա»ով աշխարհի խաղաղութիւնն էինք խնդրած եւ որդեգրութեան մեր ուխտը կատարած. այնուհետեւ նոյն պաղատական արարողութիւնը կրկնած էինք ամէն օր, երեկոյեան ժամերգութենէն ետք, նոյնիսկ երբ կարօտով հեռացանք վանքէն:

Մխիթարի որդիները՝ կարծէք՝ Մեթոնի պատերազմէն է որ ազատած, դար-

ձեալ կ'ապաստանէին Ս. Ղազար, «Պահպանիչ որդեգրաց» Տիրամօր քաղցր հովանիին տակ:

Այդ օրը, սակայն, բոլորիս դարմանքը մեծ եղաւ, երբ Ս. Ղազարի մէջ հանդիպեցանք յիսունէ աւելի դադթական հայ ընտանիքներու, որոնք պատերազմի կըրակներէն ազատած՝ հասեր էին Վանետիկ: Միաբանութիւնը Լիտուի մէջ չէնք մը տրամադրած էր անոնց, ինչպէս նաեւ Մուրատ-Ռափայէլեան Վարժարանի մէջ ինչ ինչ յարկաբաժիններ, եւ հայրարար խնամք կը տանէր մեղմելու անոնց վիշտն ու նիւթական կարօտութիւնները:

Աչուներ կը մօտենար. բայց Ս. Ղազարի վանականներու սրտին մէջ աչուներն ու ձըմեռը անցած էր. դարուն կը ծաղկէր, յոյսով զեղուն, վերանորոգումի աշխատանքին լծուելու սրտեռանդն տենչերով:

Ս. Ղազար չունէր աշակերտ. նորընծայարանը՝ թէեւ իբր չէնք չէր կրած ծանր վնասներ, սակայն ապակիներն էին ջարդուիչուր. վառելանիւթի չզոյլութենէն, խոնաւութիւնը բոյն դրած էր ամէնուրեք: Աշխատանքի ժամը կը հնչէր Մխիթարի որդիներուն համար, վերածաղկեցնելու այդ նուիրական յարկերը:

1945ի Նոյեմբերի վերջերը, շնորհաբեր ցօղի նման Մխիթարեան մայրավանքին վրայ կ'իջնէր աստուածաւանդ օրհնութիւնը Ամենապատիւ Տ. Տ. Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեան Կաթողիկոս-Պատրիարքին, որ կու գար Ս. Ղազար, իր այցելութեամբ սիրովելու եւ քաջալերելու Մխիթարի զաւակները: Հանդէսներ եւ ընդունելութիւններ կը սարքուէին ու կը ստեղծուէր խանդավառ մթնոլորտ, կարծէք ջնջելով ի սպառ պատերազմին աղէտները, յուսատու արշալոյսին ակընկալութեամբ:

(Շար. 6)

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

ՎԱՐՔ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ

2.

ՄԱՇՏՈՅԻ ՄԱՋԸ

ԵՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՃՇՏՈՒՄՆԵՐ

(Շար. տե'ս «Բազմավէպ» 1967, ք. 11-12, էջ 243)

Ս. ՍԱՀԱԿԻ ՄԱՋԸ ԵՒ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

Կորիւն՝ իր վարդապետին վարքը փակելէ առաջ՝ կը յիշէ Ս. Սահակի մահը, անոր հետ կապելու համար Ս. Մեսրոպինը. եւ այնպիսի մանրամասնութիւններ կու տայ անոնց մահուան նկարագրութեան մէջ, որ կը յայտնէ թէ ինք անձամբ ներկայ եղած է, թէեւ իր դրուածութեան ընթացքին՝ առաջին դէմքը չի դործածեր. «Յետ այնորիկ, կը գրէ ան, դէպ ինչէր նովին ճամարտութեամբ երանելոյն Սահակայ, լցեալ աւուրբք, երկայն ժամանակօք եւ վայելչացեալ աստուածաբեր պաղոցն բարութեամբք, յառաջնում ամի Յաղկերտի, որդւոյ Վառձայ՝ թաղաւորի կացելոյ ի Պարսից աշխարհին, ի Բաղրեւանդ դաւառի, ի դիւղն Բլրոցաց, ի կատարել ամսեանն Նաւասարդի, որպէս եւ զօր ծննդեանն երանելոյն յիշէին, յերկրորդ ժամու աւուրն, ի պաշտաման անուշահոտ իւղոյն, հանդերձ աստուածահաճոյ աղօթիւք ծերունւոյն, ի Քրիստոս աւանդել զհոգին, հայեցեալ ի բան մարդարէին որ ասէր. ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ. եւ Ստեփանոսի երանելոյ՝ որ ասէր. Տէր Յիսուս, ընկալ զհոգի իմ: Ըստ նմին օրինակի եւ նորա ապստղեալ զանձն եւ ըզմնացեալս ամենապահ շնորհացն Աստուծոյ»⁶¹:

Այսքան մանրամասնութիւններու մէջ՝ կարծես Կորիւն մոռցած է յիշելու Սահակ-

կի մահուան օրուան պատկերը, որ սակայն կարեւոր պարագայ մըն էր թէ՛ ժամանակակիցներու համար եւ թէ՛ մանաւանդ մեզի. քանի որ անոր հիման վրայ կարելի էր անվիճելի ճշտութեամբ ստուգել մահուան բուն թուականը: Այնուհանդերձ, Սոփերքի մէջ հրատարակուած Սահակի վարքը կը յիշէ թէ ատիկա պատահած է հինգշաբթի օր մը⁶²: Այս վկայութեան հիման վրայ, Փրանսացի տոմարագետ՝ Տիւրրիէ ճշտած է թէ Սահակի մահուան ստոյգ թուականը պէտք է ըլլայ 439ի Նաւասարդ 30ը, որ է Սեպտեմբեր 7, ինչ որ հինգշաբթի մը կը հանդիպի⁶³: Այս մասին աւելի երկար պիտի խօսինք յետոյ:

Երկրորդ մանրամասնութիւն մըն ալ պիտի ըլլար Սահակի տարիքը, զոր յիշած է Կորիւն: Յետագայ պատմիչներ անոր կը վերագրեն չափազանցուած տարիք մը. այսպէս, Թովմաս Արծրունի՝ հարիւր քսան տարի կու տայ. «Կեցեալ, կը գրէ ան, սուրբն Սահակ ամս հարիւր քսան՝ փոխի աշխարհէս»⁶⁴: Իսկ «Տիե-

61. ԿՈՐԻՒՆ, Վ. Մ., էջ 86/8:

62. Պատմութիւն վարդապետ Ս. Սահակայ Հայրապետի, Վանեակ, 1853, Սոփերք Հայկականք, Բ, էջ 35:

63. DULAURIER, «Recherches sur la chronologie arménienne», Paris, 1852, p. 135, n. 39.

64. ԹՈՎՄԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ, Պատմութիւն տանն Արծրունեաց, Կ. Պոլիս, 1852, էջ 81:

կեղիս» կոչուած անանուն պատմութիւնը՝ հարիւր տասը տարի կը վերադրէ⁶⁵։ Երկուքն ալ ճշմարտութեան չեն համապատասխաներ, քանի որ՝ եթէ նուազագոյն հարիւր տասը տարին ընդունինք, արդէն Սահակի ծննդեան թուականը պէտք է զնենք 329ը, երբ զեռ նոր կը վախճանէր Գրիգոր Լուսաւորիչ, ու ոչ իսկ ծնած էր Սահակի հայրը՝ Ս. Ներսէս Պարթեւ։ Ս. Սահակի ծննդեան թուականին ստուգման համար ալ Սոփիերքի մէջ հրատարակուած «Ներսէս Մեծի վարքի» մէջէն վկայութիւն մը ունինք, որ կ'ըսէ. «Մանուկն Ներսէս սնաւ եւ ուսաւ ի Կեսարացոց դաւառին, ամուսնաւ իւրով. եւ եղեւ որդի մի նորա եւ անունեաց զնա Սահակ, ի կնոջն, որում անուն էր Սանդուխտ, ի յազգէն Մամիկոնէից։ Եւ յետ երկու ամաց՝ մեռաւ ամուսինն իւր Սանդուխտ, ի Կեսարիա. եւ հայր նորա Վարդան Մամիկոնեան տարեալ զմարմին նորա ի Թիւն աւան եւ անդ թաղեաց զնա»⁶⁶։ Այս վկայութենէն կը հետեւի որ Սահակ ծնած ըլլայ Կեսարիա, երբ Ներսէս հոն կը գլուխդէր իբրեւ ուսանող. կնոջ մահէն ետք՝ Ներսէս շուտով վերադարձաւ հայրենիք եւ Արշակ թագաւորի սենեկապան եղաւ։ Արդ, Արշակի զահակալութիւնը եղած է 350ին. իսկ Ներսէսի կաթողիկոսական ընտրութիւնն ալ 353ին⁶⁷։ Ուստի Ներսէս ամէնէն ուշ 351ին պէտք է վերադարձած ըլլայ Կեսարիայէն եւ Արշակի ծառայութեան մտած։ Եթէ Սահակի ծնունդը քանի մը տարի առաջ զնենք, կ'ունենանք 348 թուականը իբրեւ հաւանական տարի։ Կորինի վկայութեան համաձայն՝ Ս. Սահակի մահը զուգահեռ պատճառ է իր ծննդեան օրուան, այն է՝ Նաւասարդ 30ին. եթէ ուղենք նաեւ օրուան պատկերն ալ

նոյն համարիլ, այսինքն հինգշաբթի օր մը, տոմարական հաշիւներու համաձայն՝ 348 թուականին Նաւասարդ 30ը ճշտիւ հինգշաբթի պատահած ըլլալով (348, Նաւասարդ 30 = Սեպտ. 29, Եշ. օր)⁶⁸, կրնանք նկատել Սահակի ծննդեան հաւանական թուականը։ Հետեւաբար, Ս. Սահակի տարիքը իր մահուան պահուն իննսունէն աւելի եղած չէ։ Եւ ասիկա Կորինի խօսքերուն ալ կը պատշաճի, այսինքն. «Լցեալ աւուրբ, երկայն ժամանակօք» բացատրութեան։

Երրորդ պարագան ալ մահուան տեղն է, որ Կորին կը նշէ Բագրեւանդ դաւառի Բլուր գիւղին մէջ։ Սակայն չի բացատրեր թէ ինչո՞ւ Սահակ հոն կը դառնայ եւ ոչ ալ թէ ինչո՞ւ Մաշտոց անոր մահուան ատեն բացակայ էր. մինչդեռ Ս. Խորենացի ասոնց պատճառներն ալ կը բացատրէ։ Իրապէս, մեր պատմահայրը, յետ խօսելու Ս. Սահակի դաճնկէցութեան եւ Պարսկաստանի մէջ Վառամ արքայէն իբրեւ աքսորեալ բռնուելու պարագաներու մասին, կը պատմէ թէ ինչպէս հայ նախարարներու կողմէն պատուիրակութիւն մը կ'երթայ Պարսից արքունիքը՝ Ս. Սահակի վերադարձը խնդրելու արքայէն. նոյն ատեն՝ Յունաց բաժնի կառավարիչն ալ առաջարկ կը ներկայացնէ, որ Պարսից արքան թոյլ տայ Ս. Սահակին՝ իր բաժնին մէջ կաթողիկոսական պաշտօն վարելու։ Վառամ արքան զիւանադիտութեամբ մը կ'ուզէ զանազան խումբերու առաջարկները գոհացնել, առանց թոյլ տալու որ Ս. Սահակ Յունաց Բաժնի Հայաստանը երթայ. ուստի Ս. Սահակի կը վերապահէ ձեռնադրութեան իրաւունքը, իսկ Շմուկ աւսորին ալ կը զրկէ՝ քաղաքական իշխա-

նութեան իրաւունքներով⁶⁹։ «Իսկ զմեծն Սահակ, կը գրէ պատմահայրը, արձակեալ թողու ի նա սակաւ դիւղս ի նորին տանէ, զի նաոյց յինքեան, միայն իշխանութիւն ունելով վարդապետութեան սովորական կրօնիցն եւ ձեռնադրութեան զայնոսիկ, զորոց եւ Շմուկն յանձն առնուցու»⁷⁰։ Թէեւ վերածուած իշխանութեամբ, բայց Ս. Սահակ կը վերադառնայ հայրենիք. միայն թէ այլ եւս Վարդապատ երթալը աւելորդ նկատելով՝ կը քաշուի իրեն սեփականութիւն մնալու Բագրեւանդ դաւառի գիւղերը։ Մինչ Կաշոց՝ կը մնար Վաղարշապատ, զեկալարելու համար թէ՛ վարդապետանութեան համար թէ՛ կաթողիկէն, իբրեւ Ս. Սահակի փոխանորդ։ Որքան որ Սահակ ձեռնադրութեան իրաւունքը ունէր, բայց ծոռներ ներկայացնելու իրաւունքը. բայց ինչպէս կը գրէ Խորենացի, «ոչ թոյլ տայ Մեծին Սահակայ ձեռնադրել փոխանորդ Մեծին»⁷¹։ Այս կացութիւնը կը տեւէ մեծելոյն»⁷²։ Այս կացութիւնը կը տեւէ մինչեւ Շմուկի մահը. որմէ ետք՝ հայ միւնչեւ Շմուկի մահը. Ս. Սահակէն նախարարները կու գան Ս. Սահակէն նախարարելու որ յանձն առնէ կաթողիկոսական պաշտօնը ամբողջապէս կատարել։ Բայց Ս. Սահակ հրաժարելով կը պատմէ անոնց իր տեսիլքը։

Ղ. Փարպեցի կ'աւելցնէ՝ թէ ասիկէ ետք Սահակ բոլորովին քաշուեցաւ աշխարհական զբաղումներէ եւ նուիրուեցաւ ազօրքի եւ վարդապետութեան. քանի որ, կը գրէ նոյն պատմիչը, «Բագրեւանդ յաւիտեան կը յայլոց ի պատուական քաղաքացի եւ յայլոց ի պատուական հանայից ոչ երբեք ժողովին տեւել եւ մեկուսանալ ի մշտաբեր շրջանը վարդապետութեան սրբոյն, ուր ուրեք եւ գիւղեր, ի յոստանի կամ ի հովս»⁷³։ Թէեւ

մեր պատմիչները չեն ըսեր թէ Շմուկի ո'վ յաջորդեց, բայց պատմական ուրիշ վկայութիւններէն զիտենք՝ թէ Սուրմակ դարձեալ պաշտօնի գլուխ անցաւ մինչեւ մահը, այն է 444 թուականը, Շահապիւ վանի ժողովքի տարին, եւ Ս. Սահակի մահէն վեց տարի աւելի ուշ⁷⁴։

Ս. Սահակի մահէն առաջ Պարսկաստանի մէջ կը մեռնէր Վառամ Ե. եւ կը յաջորդէր որդին Յազկերտ Բ.։ Խորենացի կը պատմէ թէ թագաւորութեան սկիզբը՝ Յազկերտ Մծնի վրայ յարձակում ընել կու տայ, հրամայելով որ Աւերապատականի բանակը շարժի եւ քալէ Հայաստանի վրայով։ Այս առթիւ է որ Ս. Սահակ, արդէն հիւանդացած վիճակի մէջ, Բլուր գիւղը փոխադրուեցաւ «Որպէս թէ ի վայր ե'ւ ընտանեզոյն ե'ւ զերծ տեղի մատուցեալ ի զօրացն Պարսից կտտողաց զնոսա»⁷⁵։ Հոս կը կնքէ իր մահականացուն Մեծն Սահակ, բայց մարմինը կը թաղեն Աշտիշատ, իր սեփական գիւղին մէջ։ Խորենացի հետեւեալ քանդակի խօսքերով կը փակէ Ս. Սահակի պատմութիւնը. «Որ մահականացու ծնեալ՝ անմահ զիւրն յիշատակ եթող. պատուեաց զպատկերն, պատկառեաց ի կոչնակէն, փոխադրեաց զկեանսն, եւ այնքան կենցաղավարեաց՝ իբր զի ոչ պակասութեան իրիք մասն ի ծերութենէն եղանիլ եւ ոչ յախտից առնողունել»⁷⁶։

Ս. ՄԵՍՐՈՊԻ ՄԱՋԸ ԵՒ ՊԱՐՍԱՆԵՐԸ

Կորին լուրթեամբ անցած է Ս. Սահակի մահուան վերաբերող վերոյիշեալ բոլոր մանրամասնութիւններուն վրայէն, որովհետեւ Ս. Սահակի վարքը չէր իր գրածը։ Ուստի, յետ յիշելու Ս. Սահակի թաղման արարողութիւնը, կ'անցնի Մաշտոցի մահուան մասին խօսելու, կապելով

65. G. GARITTE, «La Narratio de Rebus Armeniae», Louvain, 1952, p. 30.

66. Պատմութիւն Ս. Ներսէսի Պարթեւի, Վենետիկ, 1853, Սոփիերք Հայկ. 2, էջ 14։

67. ԱՆԱՆԵԱՆ Հ. Պ., Գրիգոր Լուսաւորիչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, Վենետիկ, 1960, էջ 192, 201 եւ յջ.։

68. 348ի Նաւասարդի առաջին օրը կը համապատ-

ասխանէր Յունեան տոմարի Օգոստոս 31ին (ՏԵՍ ՏԻԼՈՐԻԷ, Անդ, էջ 384), եւ Նաւասարդ 30ը կը համապատասխանէ Սեպտ. 29ին։ Ըստ կերականորէն՝ նոյն տարուան Սեպտեմբերը կը սկսէր Եշ. օրով (ՏԵՍ ՏԻԼՈՐԻԷ, Անդ, էջ 393), ուստի Սեպտ. 29ն ալ Եշ. օր կը հանդիպէր։

69. Մ. ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն, Գ, կդ, կե։

70. Մ. ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն, Գ, կե։

71. Մ. ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն, Անդ։

72. Ղ. Փարպեցի, Պատմութիւն, Ա. դրուագ, (հրտ. Վենետիկ, 1873), էջ 102։

73. ՀԱՄԵԼ ԵՄ. Հ. Պ., Հայ եպիսկոպոսներու ինք-

նագիւյս ձեռնադրութեան մասին նկատողութիւն մը, Բագմ. Հժ. (1952), Թ. 7-9, էջ 149-152։

74. Մ. ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն, Գ, կե։

75. Անդ, էջ 567։

